գլխաւոր մզկիթի մէջ աղօթեցին առ Աստուած թագաւոր կայսեր կեանքի երկարութեան համար յաւիտեանս, յետոյ գնացին Նահանգապետի մօտ ցոյց տալ նրանց եղանակը ընդունելութեան Նորին Բարձրութեան։

Նահանգապետի կարգադրութեամբ նրանք առաջ ճանապարհները հարթեցին, կամուրջները նորոգեցին, նոր ձեւ տուեցին շուկային, յետոյ խորհուրդ արեցին որով և եզրակացրին, որ Նորին Բարձրութեան ձիանց ոտքի տակը փիանդազ փռել և թողնել այս ի նշան յիշատակի իրենց յետագայի համար։ Գալու օրը ժառանգի, այսինքն 16ն հոկ. 1850 թ., հասարակութիւնը սպասում էր Նորին Բարձրութեան. դռների առաջ կանգնած էին 40 ընտրուած բէկեր՝ Ալիմով, Աղամիրով և վաճառականներ, որոնք աղ և հաց ներկայացնելու համար ընտրեցին Հաջի Սամէտ Ախանդովին. քանզի ըստ սովորութեան մահմետականաց թագաւոր կամ ժառանգ գալու ժամանակ կը ներկայացնեն նրան աղ ու հաց, և նրանից այդ աղ ու հաց ընդունելը համարվում է նշան ողորմութեան։

Նոյն օր 8 ժամին ճաշից յետոյ թագաւոր ժառանգը լուսնի նման շրջապատած աստղներով—իշխաններով, փոխարքայով և Արդաթեանով, նոյնպէս նահանգապետը իւր մարդկանցով մտաւ քաղաք թնդանօթի արձակմամբ. քաղաքը լուսաւորուած էր ճրագավառութեամբ, և շնորհակալական նշան տալով ժողովրդին և զօրքին, որոնք յարգանք էին տուել դիւրարի հրապարակի վերայ, գնաց իրեն համար պատրաստած նահանգապետի տունը։ Միւս օրը ամպամած էր. ժողովուրդը սպասում էր Նորին Բարձրութեանը նահանգապետի դռանը։ Նա դուրս եկաւ տնից և հրամայեց խնդրագրերը ստանալ և արժանացրեց մի քանի մարդկանց ողորմած ուշադրութեան և շնորհակալութեան, բարեհաճեց նայել Վարանցովի աւազանը. մտաւ գաւառատան և սիւնիների դպրոցները. ուրախացրեց աշակերտներին իւր բարձրագոյն բարութեամբը խրախուսելով նրանց աշխատութեան և արիաջանութեան համար, յետոյ նայեց բերդապահ զօրքերին, նայեց հիւանդանոցը, մեծն Պետրոսի եղած տեղը, և ծովի այն ափը, որ տեղ սկսել էին նաւահանգիստ շինելու։

Այն տեղից դառնալով գնաց գլխաւոր մզկիթը, որ տեղ մին-